

«Գարեբի խորհուրդը, հին պատգամն իրականացաւ 1918 թ. : Հայաստանի անկախութեան կործանումից յետոյ մոխիրները տակ ապրում էր նրա քաղաքական ազատութեան կայծը... Քաղաքական հալածանքի, փոքրուգութեան ու դիմադրկութեան մոռալ շրջաններում, այդ կայծն առաջնորդող փարոս հանդիսացաւ»\*) :

Մխիթարական է անգամ այսքանը լսել հայ մարքսիստի բերնէն : Վասնզի հայ մարքսիստները, բոլշեւիկ թէ մենշեւիկ, քսան տարիէ ի վեր մեզի վարժեցրեր էին այլ կարգի յայտարարութիւններ լսելու, — ազգային արժէքները հեղնող ու բացասող յայտարարութիւններ...

Ճիշդ կը ներկայացնէ եւ «Գաղնակցութեան» ու հայութեան զգացումն ու դիրքը բոլշեւիկներու հանդէպ հոկտեմբերեան յեղաշրջումէն ետքը .

«Հայերի մէջ տիրող կուսակցութիւնը Գաղնակցութիւնն էր»...

«Գուցէ պարագօքսալ թուայ շատերին, բայց մեր խորին համոզմունքով եթէ Այսրկովկասում գերակուէր Գաղնակցութեան (իմա հայկական) ազդեցութիւնը, ապա մեր երկիրը չէր ծառանալ ուսական կենտրոնի դէմ եւ կը համակերպուէր մեծամասնական իշխանութեան : Այսպէս ենք ասում այն պատճառով, որ արտաքին վտանգի եւ դրացիական դժտութեան երեսից՝ հայերը կենտրոնածիղ էին եւ չէին կամենալ բաց թողնել ուսական փէշը, եթէ այն ինքը չխուսափէր հայերի ձեռքից : Միւս կողմից, չխորանալով երեւոյթի քննութեան մէջ, պիտի ասենք, որ Գաղնակցականների ու Մեծամասնականների խառնուածքը միեւնոյն նիւթից էր եւ նրանք կարող էին համաձայնութեան եզրեր շօշափել եւ իրար գործակցել դոնէ այն չափով, որ չափով այդ արին Ռուսաստանում ձախ սօցիալիստ-յեղափոխականները : Սակայն Այսրկովկասում առաջին դերը եւ առաջին խօսքը Գաղնակցութեան չէր պատկանում, այլ վրաց սօցիալ-դէմօկրատիային»...

Այո՛, կացութեան տէրը վրաց-մուսավաթական բլօքն էր, տոգորուած անջատական

ձգտումներով . Գաղնակցութիւնը Ռուսաստանի հետ էր — անգամ բոլշեւիկ Ռուսաստանի — բաւ է վայրկեան մը անդրադառնալ Բագուի հերոսամարտի վրայ, որ կը մղէր այդ կուսակցութիւնը ընդդէմ թաթար մուսավաթիգմի, ձեռք ձեռքի տուած Ծահուճեանի ու իր բանուորական վաշտերու հետ... Միմիայն ոուս ու հայ բոլշեւիկի նեղաճակատ մուկուանդները կարող են պնդել — կարգ մը այլ ներքին հակառակորդներու հետ — թէ Գաղնակցութիւնը սկիզբէն իսկ անհաշտ թշնամի եղած է բոլշեւիկեան տիրապետութեան եւ չէ ուղած երբեք համաձայնութեան գալ յաղթողներու հետ :

Գ. Անանուն, որ կ'ապրի ու կը դբէ Հայաստանի մէջ, այդ շիտակ ու բացսիրտ յայտարարութիւններով մատը կը դնէ ցաւոտ վէրքերէն մէկուն վրայ եւ մեղմ ոճով ապտակներ կը տեղայ բոլշեւիկներու, մասնաւորապէս Հայաստանի վարիչներու երեսին : Մեղմ բաներով նա կը խարանէ բոլշեւիկեան պառակտիչ ու յանցագործ քաղաքականութիւնը, պառակտիչ՝ Անդրկովկասում ու ողջ Ռուսաստանում :

«Հողի հարցը, կ'ըսէ բոլշեւիկի մը այդ ներքին քննադատը, որու գլխէն ըստ երեւոյթին հետու է Ձեկայի ստուերը (կամ դայն կը փրկէ իր երգուեալ հակադաշնակցական լինելու հանդամները) — հողի հարցը նոյնպէս կարող էր անցնիլ առանց պառակտումների : Ձախից աջ՝ բոլոր սօցիալիստական հասանքները հողը տալիս էին երկրագործին»...

«Այսրկովկասի Կօմիսարիատը կամենում էր երկիրը հասցնել Հիմնադիր Ժողովին, որի բնորոշութիւնները կայանում էին նոյեմբերի 12-ին : Թւում էր թէ դէմօկրատիայի տարբեր թեւերի մէջ ծագած տարաձայնութիւններն իրանց աւարտն կ'ունենան Հիմնադիր Ժողովում... Իր մեծամասնութեամբ նա սօցիալիստ-յեղափոխական էր : Այդպէս էին վկայում ընտրութիւնները : Մեծամասնականները չկամեցան պայքարին պարլամենտական բրնոյթ տալ եւ խոնարհուել Հիմնադիր Ժողովի հեղինակութեան առաջ : Նա բացուեց 1918 թ. յունուարի 5-ին, որպէսզի՝ տեղի տալով մեծամասնականների ոյժի առաջ՝ ցրուի»...

Սակայն, այս բոլորը ըսուելէ յետոյ,

\*) էջ 692